With funding from
Austrian Development Cooperation

YOUTH INITIATIVE CENTRE

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Շիրակի և Գեղարքունիքի մարզերում տրամադրվող ենթադրամաշնորհային բաղադրիչ

Նախագծերը ներկայացնելու վերջնաժամկետը՝ 05/09/2023, ժամը 18:00

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԻ ԾՐԱԳԻՐ

1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Կլիմայի ճգնաժամը երեխայի իրավունքների ճգնաժամ է, քանի որ կլիմայի փոփոխությունները և դրա հետևանքները ոչ ոքի վրա այնքան չեն ազդում, որքան երեխաների ու դեռահասների, հատկապես ամենախոցելիների: Աղքատության մեջ ապրող երեխաներն ու դեռահասներն է՛լ ավելի են ենթարկվում արտաքին ցնցումների ազդեցությանը, քանի որ դա հանգեցնում է բազմակի խոցելիության, որոնք պահանջում են համալիր և ինտեգրված լուծումներ:

Սպասվում է, որ Հայաստանի կլիմայի պայմանները կփոխվեն հաջորդ հարյուրամյակի ընթացքում, ուստի կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված գործողությունները և վարքագծի փոփոխությունն անհրաժեշտ է կատարել հիմա: Երեխաները և դեռահասները կարող են և հանդես են գալիս որպես փոփոխության իրականացնողներ ամբողջ աշխարհում:

Շիրակի և Գեղարքունիքի մարզերում տրամադրվող ենթադրամաշնորհային բաղադրիչն իրականացվում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ՝ «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում:

«Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագիրը իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) ֆինանսավորմամբ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների հետ համագործակցությամբ:

Ծրագիրը համակարգվում է խոշորացված համայնքների, մարզպետարանների, դպրոցների, ուսուցիչների և երիտասարդների հետ:

Ծրագրի երկարաժամկետ նպատակն է, որ **դեռահաս աղջիկներն ու տղաները և համայնքները գործողություններ ձեռնարկեն կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության, ազդեցության նվազեցման համար՝ կրթության, վաղ ազդարարման, տեղական կառավարման մարմինների հզորացման, մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման միջոցով՝ Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ), ազգային և ԱԶԳ-ի զարգացման առաջնահերթություններին համահունչ:**

Ծրագրի վերջնարդյունքն այն է, որ դեռահասները դառնան կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված գործողությունների և լուծումների իրականացնողներ, որոնք նպաստում են Հայաստանում սոցիալապես և բնապահպանական կայուն համայնքների ստեղծմանը:

2. ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծրագրի ենթադրամաշնորհային բաղադրիչը կիրականացվի Շիրակի մարզի Արթիկ, Անի, Ախուրյան և Ամասիա համայնքներում՝ ներառելով նշված համայնքների բնակավայրերը:

Ծրագրի ենթադրամաշնորհային բաղադրիչը կիրականացվի Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս և Շողակաթ համայնքներում՝ ներառելով նշված համայնքների բնակավայրերը:

Ծրագրերը պետք է հիմնվեն «Տեղական մակարդակում ռիսկի կառավարման» /ՏՄՌԿ/ մեթոդաբանությամբ գնահատված համայնքի կլիմայական ռիսկերի և համայնքի կողմից ընտրված կլիմայի փոփոխության հարմարվողականության գերակա լուծումների վրա և համահունչ լինի ՀՀ կառավարության կողմից ընդունված «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին»[1] և «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին»[2] որոշումներին:

Համայնքի կողմից ընտրված կլիմայի փոփոխության հարմարվողականության գերակա լուծումները հասանելի են հետևյալ հղմամբ[3]:

2.1. ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՌՈՒԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՇՆՈՐՀԱՌՈՒ) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ենթադրամաշնորհին դիմելու համար դիմորդը պետք է լինի.

- ✓ **Բաղադրիչ 1** - այս բաղադրիչով կարող են դիմել **միայն** համայնքային կառավարչական հիմնարկները: Ծրագրերի առաջարկի շուրջ անհրաժեշտ է անցկացնել հանրային քննարկում՝ ապահովելով դեռահասների/երիտասարդների[4] մասնակցությունը, որի վերաբերյալ պետք կազմվի արձանագրություն և այն կցվի հայտադիմումին: Համայնքապետարանները կարող են ներկայացնել նաև համայնքի նախաձեռնող խմբերի կողմից մշակված ծրագրի առաջարկները: Այս դեպքում հայտադիմումին կցվում է նախաձեռնող խմբի ստորագրությունների պաշտոնաթերթիկը՝ համաձայն հավելված 3-ի: Նախաձեռնող խմբի առաջարկով կազմված ծրագրի առաջարկների հանրային քննարկումը պարտադիր չէ: Համայնքները կարող են ներկայացնել առավելագույնը 3 ծրագրային առաջարկ, որոնք կիրականացվեն համայնքի տարբեր բնակավայրերում:

- ✓ **Բաղադրիչ 2** - այս բաղադրիչով կարող են դիմել **միայն** թիրախ համայնքներում գործող միջնակարգ, հիմնական և ավագ դպրոցները, այլ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, հասարակական

---

[1] ՀՀ կառավարության 22 ապրիլի, 2021թ. N 610-Լ, որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151985

[2] ՀՀ կառավարության 13 մայիսի, 2021թ. N 749-Լ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152612

[3] Համայնքներում (բնակավայրերում), որտեղ գնահատումը դեռ իրականացված չէ, անհրաժեշտ է հիմնվել հարևան համայնքների գերակա լուծումների վրա՝ հիմնավորելով համապատասխան ռիսկի առկայությունը տվյալ համայնքում:

[4] Ծրագրի շրջանակներում տարիքային շեմ է համարվում 16-30 տարին:

կազմակերպությունները կամ հիմնադրամները, որոնք ունեն առնվազն 2 տարվա պետական գրանցում տվյալ համայնքում (բնակավայրում): Հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները ծրագրային հայտին պետք է կցեն նաև վերջին 2 տարվա ընթացքում իրականացրած ծրագրերի մասին տեղեկատվություն, օրինակ՝ պայմանագիր, հաշվետվություն կամ այլ փաստաթղթեր:

2.2 ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենթադրամաշնորհների համար ներկայացված առաջարկները պետք է ուղղված լինեն համայնքային մակարդակում կլիմայի փոփոխության հարմարվողականությունը՝ նվազեցնելով համայնքի խոցելիությունը կլիմայի փոփոխության անբարենպաստ գործոնների ու ծայրահեղ դրսևորումների նկատմամբ և հնարավորություններ ստեղծելով համայնքային զարգացման, համար: Ծրագրերը կարող են ներառել հետևյալ ոլորտները/թեմաները և նպաստեն երիտասարդների/դեռահասների ներգրավմանը.

- ✓ Գյուղատնտեսություն
- ✓ Մարդու առողջություն
- ✓ Ջրային ռեսուրսներ
- ✓ Բնակավայրեր և ենթակառուցվածքներ
- ✓ Էներգետիկա
- ✓ Զբոսաշրջություն
- ✓ Էկոհամակարգեր
- ✓ Շրջակա միջավայրի պահպանություն
- ✓ Կրթություն
- ✓ Երիտասարդություն
- ✓ Մշակույթ և սպորտ
- ✓ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն

Ծրագրերը պետք է հիմնվեն «Տեղական մակարդակում ռիսկի կառավարման» /ՏՄՌԿ/ մեթոդաբանությամբ գնահատված համայնքի կլիմայական ռիսկերի և համայնքի կողմից ընտրված կլիմայի փոփոխության հարմարվողականության գերակա լուծումների վրա: Այն ծրագրերը որոնք իրականացվելու են թիրախ համայնքներում և որոնց համար նման գնահատում դեռ չի իրականացվել անհրաժեշտ է հիմնվել ՀՀ կառավարության կողմից ընդունված «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» և «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշումների կամ հարևան համայնքների գերակա լուծումների վրա՝ հիմնավորելով համապատասխան կլիմայի փոփոխության ռիսկի առկայությունը տվյալ համայնքում:

Առաջնահերթություն կտրվեն երիտասարդների կողմից /մասնակցությամբ ներկայացված ծրագրերին: Ծրագրերը պետք է ներառեն երիտասարդների հետ խորհրդակցություն:

2.3 ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրականացման մեկնարկը կտրվի 2023թ.-ի սեպտեմբերին: Նախագծերի իրականացումը և վերջնական հաշվետվության տրամադրման ժամանակը չի կարող գերազանցել 2 (երկուս) ամիսը (մինչև 2023թ.-ի նոյեմբերի 15):

2.4 ՇՆՈՐՀԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԸ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից յուրաքանչյուր ծրագրին կհատկացվի առավելագույնը 3,390,000 դրամ (երեք միլիոն երեք հարյուր ինսուն հազար դրամ) չգերազանցող գումար: Խրախուսվում է համայնքների և կազմակերպությունների կողմից ծրագրերի համաֆինանսավորումը մինչև 10% չափով: Համաֆինանսավորում կդիտարկվի ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ-ֆինանսական ներդրումները:

2.6 ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Շնորհառուն պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր քայլերը հրապարակելու համար այն փաստը, որ ծրագիրը ֆինանսավորվել է Ավստրիական զարգացման գործակալության կողմից և իրականացվում է Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների հետ համագործակցությամբ: Տեսանելիության նյութերը պետք է նախապես համաձայնեցվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկեր կազմակերպությունների հետ:

2.7 ՆԱԽՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարությունը կզետեղվի գործընկեր կազմակերպությունների պաշտոնական կայքում: Այն կշրջանառվի նաև այդ կազմակերպությունների կողմից գործածվող այլ տեղեկատվական խողովակներով: Հայտատուներն իրենց ծրագրային առաջարկները պետք է ներկայացնեն՝ տրամադրված ձևանմուշի համաձայն:

Հայտատուները կարող են դիմել հայտարարության մեջ նշված կազմակերպությանը պարզաբանումների համար: Հարցերը պետք է ուղղվեն գրավոր հայտարարություն նշված վեջնաժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ: Ավելի ուշ ներկայացված հարցերին պատասխաններ չեն տրվի:

2.7.1 ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հայտադիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներառում է.

1. Հայտատուի մասին համառոտ տվյալներ

Բաղադրիչ 1-ով հայտատու կազմակերպությունների դեպքում

- ✓ Համայնքի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված ուղեկցող նամակ

- ✓ Հանրային քննարկման վերաբերյալ արձանագրություն *(եթե ծրագրի նախաձեռնողը և իրականացնողը համայնքապետարան է)*
- ✓ Ստորագրությունների պաշտոնաթերթիկ՝ ստորագրված աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից *(եթե ծրագիրը առաջարկել է և իրականացվելու նախաձեռնող խմբի կողմից)*

Բաղադրիչ 2-ով հայտատու կազմակերպությունների դեպքում

- ✓ Կազմակերպության կանոնադրություն,
- ✓ Գրանցման վկայական,
- ✓ Նախկինում իրականացված ծրագրերի մասին համառոտ տեղեկություն (Դպրոցների պարագայում պարտադիր չէ)

2. Ծրագրի մանրամասն նկարագրություն [5]

3. Մանրամասն, տող առ տող բյուջե հիմնավորումներով[6]

2.7.2. ԲՅՈՒՋԵ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հայտատուի կողմից ներկայացվող նախագծի բյուջեն պետք է ներառի բոլոր հնարավոր ծախսերը: Ենթադրամաշնորհի բյուջեի հաստատումից ու կողմերի միջև պայմանագրի ստորագրումից հետո ծրագրի ծախսերի իրականացումը պետք է խստորեն հապատատասխանի նախապես հաստատված բյուջեին: Բյուջեի ծախսային տողերի ցանկացած փոփոխություն, որը կազմում է ընդհանուր արժեքի մինչև 10%-ը, կարող է կատարվել Շնորհառուի կողմից՝ առանց Շնորհատուին նախապես ծանուցելու, պայմանով, որ այդ տողի գերածախսը չի հանգեցնի համախառն բյուջի փոփոխության: Բյուջետային տողերի ընդհանուր արժեքի 10%-ը գերազանցող փոփոխությունները պետք է հաստատվի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Այսպիսով, հայտատուի շահերից է բխում ներկայացնել իրատեսական և ծախսարդյունավետ բյուջե: Բյուջեի ծախսի յուրաքանչյուր տողի անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի հայտի նկարագրության մեջ:

Ենթադրամաշնորհի հաստատումից առաջ կատարված որևէ ծախս չի կարող դիտարկվել որպես ծրագրային ծախս և ներառվել բյուջեում:

Ենթադրամաշնորհի շրջանակներում ընդունելի են գործառնական և ծրագրային ծախսեր: Այդուհանդերձ, պետք է հաշվի առնել հետևյալը.

<u>Անընդունելի ծախսեր</u>

Նշյալ ծախսերը համարվում են անընդունելի

- Պարտքեր, վարկեր, վարկային ծառայության ծախսեր,
- Վնասների փոխհատուցում կամ հնարավոր ապագա պարտավորություններ,
- Փոխառությունները և վարկերը երրորդ կողմին,

---

[5] Հայտի ձև տես Հավելված 1.

[6] Բյուջեի ձևը տես Հավելված 2ա՝ համայնքապետարանների համար և Հավելված 2բ՝ հասարակական կազմակերպությունների ՀՈԱԿ/ՊՈԱԿ-ների և այլ կազմակերպությունների համար.

– Պետական/մարզային ծառայողներին, ՏԻՄ ներկայացուցիչներին տրվող աշխատավարձերը:

3. ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ընդհանուր պահանջներ

Հայտերը պետք է ներկայացվեն Շնորհատուի կողմից հրապարակված ուղենիշների և ձևաթղթերի հիման վրա: [7]

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն:

Անաչառ գնահատում ապահովելու համար բոլոր պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն մեկ փաթեթով՝ հիմնական հայտի հետ միասին:

Ձեռագիր հայտերը չեն դիտարկվի:

3.1. ՈՐՏԵՂ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՅՏԸ

Հայտադիմումը բաղկացած է երեք մասից՝ 1) Հայտատուի մասին համառոտ տվյալներից, 2) Ենթադրամաշնորհային նախագծի հայտից, 3) Նախագծի մանրամասն բյուջեից:

Հայտադիմումների էլեկտրոնային տարբերակները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով պետք է ներկայացվեն ուղարկելով climategrants@yic.am հասցեին: Նամակի վերնագրում պետք է նշված լինի հետևյալ տեղեկությունը՝ «**Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ենթադրամաշնորհի հայտ** և հայտատուի անունը:

Հայտատուն պետք է ապահովի հայտադիմումի համապատասխանությունը պահանջներին և ամբողջականությունը: <u>Ոչ ամբողջական հայտերը կմերժվեն:</u>

3.3. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Հայտերի ընդունման վերջնաժամկետը **2023թ-ի սեպտեմբերի 5-ը՝ ժամը 18:00-ն է**:

Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտադիմումները չեն ընդունվի:

[7] Ձևանմուշները կցվում են:

4. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանված ժամկետներում և ամբողջական հայտերը կգնահատվեն փորձագիտական թիմի կողմից հիմք ընդունելով հետևայլ չափանիշները

Չափանիշ	Score
Հայտի ադմինիստրատիվ ստուգում	**10**
Որքանով է ամբողջական կազմված հայտը, և որքանով են բավարարված ուղեցույցում նշված բոլոր պահանջները	10
Ֆինանսական և գործառնական կարողություններ	**15**
Հայտատուի՝ նմանատիպ ծրագրերի իրականացման կարողությունները և հմտությունները (գնահատվում է հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա)	5
Առկա են արդյոք սեփական ներդրում և/կամ ծրագրի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցները (գնահատվում է հայտատուի կողմից ներկայացված աջակցող փաստաթղթերի կամ ծրագրային առաջարկի հիման վրա)	10
Նախագծի համապատասխանությունը	**55**
Որքանով են առաջարկվող գործողությունները համապատասխանում և անմիջականորեն առնչվում ծրագրի նպատակներին և թիրախային համայնքներին	10
Նախագծի ազդեցությունը և կենսունակությունը	10
Ծրագրի էկո ուղղվածությունը և շրջակա միջավայրի վրա ազդեցությանը	10
Նախագծի նորարարությունը	10
Երիտասարդարդների մասնակցությունը	15
Նախագծի բյուջեն և ծախսարդյունավետությունը	**20**
Որքանով են գործողություններն արտացոլված բյուջեում, ծրագրային և գործառնական ծախսերի հարաբերակցությունը:	10
Որքանով են համաչափ ակնկալվող արդյունքները (մասնակիցներ, ներգրավված համայնքներ, ազդեցություն, կայունություն) և նախատեսվող ծախսերը:	10

Նախագծերը փորձագետների կողմից գնահատվելուց հետո, նախագծերը կհաստատվեն ծրագրի կառավարման խորհրդի կողմից՝ հաշվի առնելով ստացված գնահատականները, տարածաշրջանների համամասնական ընդգրկվածությունը, համայնքներում նմանատիպ ծրագրերը և այլ գործոններ:

5. ՈՒՂՂՈՐԴԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ
1. Ենթադրամաշնորհի մասին հայտարարության տարածում	Օգոստոսի 15, 2023թ.
2.Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	Սեպտեմբերի 5, 2023թ.
3. Ծրագրերի ընտրություն	Սեպտեմբերի 15, 2023թ
4. Ծրագրերի մեկնարկ	Սեպտեմբերի 25 2023թ.

*** Ծրագիրը խրախուսում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը միտված և պատասխանատու գործողությունները և ծրագրերը:**